

Գլուխ 35

«Հրաժարում՝ հոգուտ պետության»

մաքսային ընթացակարգ

Հոդված 251. «Հրաժարում՝ հոգուտ պետության» մաքսային ընթացակարգի բովանդակությունն ու կիրառումը

1. «Հրաժարում՝ հոգուտ պետության» մաքսային ընթացակարգ՝ օտարերկրյա ապրանքների նկատմամբ կիրառվող մաքսային ընթացակարգ, որին համապատասխան՝ այդպիսի ապրանքներն անհատույց հանձնվում են անդամ պետության սեփականությանը (եկամտին)՝ առանց ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման՝ պահպանելով այդպիսի մաքսային ընթացակարգով ապրանքների ձեւակերպման պայմանները:

2. «Հրաժարում՝ հոգուտ պետության» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքները ձեռք են բերում Միության ապրանքի կարգավիճակ:

3. «Հրաժարում՝ հոգուտ պետության» մաքսային ընթացակարգը չի կիրառվում հետեւյալ ապրանքների նկատմամբ՝

1) ապրանքներ, որոնց շրջանառությունն արգելված է այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի սեփականությանը (եկամտին) պլանավորվում է փոխանցել այդպիսի ապրանքները.

2) պիտանիության (սպառման, վաճառքի) ժամկետը լրացած ապրանքներ:

4. «Հրաժարում՝ հոգուտ պետության» մաքսային ընթացակարգի կիրառման կարգը սահմանվում է անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ:

Հոդված 252. Ապրանքները «հրաժարում՝ հոգուտ պետության» մաքսային ընթացակարգով ձեւակերպելու պայմանները

Ապրանքները «հրաժարում՝ հոգուտ պետության» մաքսային ընթացակարգով ձեւակերպելու պայմաններն են՝

արգելքների եւ սահմանափակումների պահպանումը՝ սույն Օրենսգրքի 7-րդ հոդվածին համապատասխան:

նշված մաքսային ընթացակարգի կիրառման արդյունքում անդամ պետությունների պետական մարմինների այն ծախսերի բացակայությունը, որոնք չեն կարող փոխհատուցվել ապրանքների վաճառքից ստացված միջոցների հաշվին, եթե այլ բան սահմանված չէ անդամ պետությունների օրենսդրությամբ.

անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանմամբ՝ սույն Օրենսգրքի 251-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան:

Գլուխ 36

Հատուկ մաքսային ընթացակարգ

Հոդված 253. Հատուկ մաքսային ընթացակարգի բովանդակությունն ու կիրառումը

1. Հատուկ մաքսային ընթացակարգ՝ օտարերկրյա ապրանքների եւ Միության ապրանքների առանձին կատեգորիաների նկատմամբ կիրառվող մաքսային ընթացակարգ, որին համապատասխան, այդպիսի ապրանքները տեղափոխվում են Միության մաքսային սահմանով, գտնվում են եւ (կամ) օգտագործվում են Միության մաքսային տարածքում կամ դրա սահմաններից դուրս՝ առանց մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման՝ այդ մաքսային ընթացակարգով ապրանքների ձեւակերպման եւ (կամ) այդպիսի մաքսային ընթացակարգին համապատասխան դրանց օգտագործման պայմանների պահպանմամբ:

2. Հատուկ մաքսային ընթացակարգը կիրառվում է ապրանքների հետեւյալ կատեգորիաների նկատմամբ՝

1) Միության մաքսային տարածքից արտահանվող ապրանքներ, որոնք նախատեսված են Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս տեղակայված դիվանագիտական ներկայացուցչությունների, հյուպատոսական հիմնարկների, միջազգային կազմակերպություններին կից անդամ պետությունների ներկայացուցչությունների գործունեությունն ապահովելու համար.

2) Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքներ, որոնք նախատեսված են Միության մաքսային տարածքում տեղակայված դիվանագիտական ներկայացուցչությունների եւ հյուպատոսական հիմնարկների կողմից պաշտոնական օգտագործման համար՝ բացառությամբ պատվավոր հյուպատոսական պաշտոնատար անձանց գլխավորած հյուպատոսական հիմնարկների.

3) Միության մաքսային տարածք ներմուծվող պետական զինանշաններ, դրոշներ, նշաններ, կնիքներ եւ դրոշմակնիքներ, գրքեր, պաշտոնական տպագիր նյութեր, գրասենյակային կահույք, գրասենյակային սարքավորումներ եւ նմանատիպ այլ ապրանքներ, որոնք ստացվում են հյուպատոսական հիմնարկների կողմից՝ հավատարմագրող պետությունից կամ ըստ հավատարմագրող պետության պահանջի, որոնք նախատեսված են Միության մաքսային տարածքում տեղակայված՝ պատվավոր հյուպատոսական պաշտոնատար անձանց գլխավորած հյուպատոսական հիմնարկների կողմից պաշտոնական օգտագործման համար.

4) Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքներ, որոնք նախատեսված են Միության մաքսային տարածքում տեղակայված՝ միջազգային կազմակերպություններին կից պետությունների ներկայացուցչությունների, միջազգային կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների կողմից պաշտոնական օգտագործման համար, որոնց համար նախատեսված է մաքսատուրքերի, հարկերի վճարումից ազատում՝ երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերին եւ անդամ պետությունների միջեւ միջազգային պայմանագրերին համապատասխան.

5) Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքներ, որոնք նախատեսված են անդամ պետության տարածքում տեղակայված այլ կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների կողմից օգտագործման համար, որոնց համար նախատեսված է մաքսատուրքերի, հարկերի վճարումից ազատում՝ այդ անդամ պետության միջազգային պայմանագրերին համապատասխան: Հանձնաժողովն իրավունք ունի սահմանելու այն ապրանքները, որոնք չեն դասվում ապրանքների այս կատեգորիային.

6) սպառազինություն, ռազմական տեխնիկա, զինամթերք եւ Միության ապրանքներ հանդիսացող այլ նյութական միջոցներ, որոնք տեղափոխվում են Միության մաքսային սահմանով՝ անդամ պետությունների՝ Միության մաքսային տարածքում եւ (կամ) դրա սահմաններից դուրս տեղաբաշխված զինվորական ստորաբաժանումների (հաստատությունների, կազմավորումների) մարտական պատրաստականությունը պահպանելու, դրված առաջադրանքները կատարելու համար բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով.

7) համատեղ (միջազգային) գորավարժություններին, մրցումներին, ինչպես նաեւ շքերթներին եւ այլ հանդիսավոր միջոցառումներին՝ անդամ պետությունների եւ Միության անդամ չհանդիսացող պետությունների զինված ուժերի (լիազորված կազմակերպությունների այլ զորքերի եւ զինվորական կազմավորումների) մասնակցության նպատակով՝ Միության մաքսային սահմանով տեղափոխվող սպառազինություն, ռազմական տեխնիկա, զինամթերք եւ այլ նյութական միջոցներ.

8) Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքներ եւ տրանսպորտային միջոցներ, որոնք նախատեսված են տարերային աղետների եւ այլ արտակարգ իրավիճակների կանխարգելման ու դրանց հետեւանքների վերացման համար, այդ թվում՝ անդամ պետությունների պետական մարմինների, դրանց կառուցվածքային ստորաբաժանումների կամ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան լիազորված կազմակերպությունների կողմից արտակարգ իրավիճակների հետեւանքով տուժած անձանց անվճար բաժանման համար, ինչպես նաեւ այն ապրանքները եւ տրանսպորտային միջոցները, որոնք անհրաժեշտ են վթարային-փրկարարական եւ այլ անհետաձգելի աշխատանքների իրականացման ու վթարային-փրկարարական կազմավորումների, բժշկական

ծառայությունների եւ այն կազմակերպությունների կենսագործունեության ապահովման համար, որոնց լիազորությունների մեջ մտնում է արտակարգ իրավիճակների բժշկասանիտարական հետեւանքների վերացման, բժշկական օգնության կազմակերպման եւ ցուցաբերման ոլորտի հարցերի լուծումը՝ ներառյալ բժշկական տարհանումը՝ բացառությամբ ակոնոլալին արտադրանքի (բացի էթիլալին սպիրտից), գարեջրի, ծխախոտային արտադրանքի, թանկարժեք մետաղների եւ թանկարժեք քարերի, ինչպես նաեւ դրանցից պատրաստված արտադրատեսակների.

9) Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքներ, որոնք նախատեսված են անդամ պետությունների անձանց կողմից՝ Արկտիկայում եւ Անտարկտիկայում, անդամ պետությունների շահերից ելնելով, ոչ առեւտրային հիմունքներով գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու, ինչպես նաեւ անդամ պետությունների՝ նշված աշխատանքներն անցկացնելու նպատակով կազմակերպված գիտահետազոտական արշավախմբերի գործունեության ապահովման համար.

10) Միության մաքսային սահմանով տեղափոխվող, դոպինգ հսկողության նպատակների համար նախատեսված ապրանքներ: Այս կատեգորիայի ապրանքներին դասվող ապրանքները սահմանվում են Հանձնաժողովի կողմից.

11) Միության մաքսային սահմանով տեղափոխվող օտարերկրյա ապրանքներ (դեղապատրաստուկներ (դեղամիջոցներ), հատուկ մարզական սնունդ, կենսաբանական ակտիվ սննդային հավելումներ), որոնք նախատեսված են ըստ սպորտաձեւերի ազգային եւ հավաքական թիմերի թեկնածուների եւ այդպիսի թիմերի անդամների նկատմամբ, անդամ պետությունների շահերից ելնելով, ոչ առեւտրային հիմունքներով բուժական եւ վերականգնողական միջոցառումների անցկացման, ինչպես նաեւ անդամ պետությունների՝ ընդգրկված նախարարությունների՝ բարձրագույն նվաճումների սպորտի ոլորտում գիտահետազոտական խմբերի գործունեության ապահովման համար.

12) Միության մաքսային սահմանով տեղափոխվող (տեղափոխված) սպորտային հանդերձանք եւ սարքավորումներ, բացառապես միջազգային մարզական պաշտոնական միջոցառումների կազմակերպման եւ անցկացման կամ դրանց

նախապատրաստվելու համար մարզական միջոցառումների անցկացման դեպքում օգտագործման համար նախատեսված այլ ապրանքներ: Այս կատեգորիայի ապրանքներին դասվող ապրանքները սահմանվում են Հանձնաժողովի կողմից.

13) անդամ պետության սահմաններից դուրս գտնվող արհեստական կղզիների, կայանքների, կառույցների եւ այլ օբյեկտների շինարարության (ստեղծման, կառուցման), գործունեության (շահագործման, օգտագործման) ապահովման համար նախատեսված օտարերկրյա ապրանքները, որոնց նկատմամբ տվյալ անդամ պետությունն ունի բացառիկ իրավագործություն: Այս կատեգորիայի ապրանքներին չդասվող ապրանքները սահմանվում են Հանձնաժողովի կողմից.

14) տիեզերական տարածքի հետազոտման եւ օգտագործման, այդ թվում՝ տիեզերական ապարատները տիեզերք բաց թողնելու հետ կապված ծառայությունների մատուցման բնագավառում միջազգային համագործակցության շրջանակներում օգտագործման համար նախատեսված ապրանքներ: Այս կատեգորիայի ապրանքներին դասվող ապրանքները սահմանվում են Հանձնաժողովի կողմից.

15) Միության մաքսային սահմանով տեղափոխվող՝ միջազգային պաշտոնական ցուցահանդեսների կազմակերպման եւ անցկացման համար նախատեսված ապրանքներ, որոնց բնութագրերը սահմանվում են Հանձնաժողովի կողմից: Այս կատեգորիայի ապրանքներին չդասվող ապրանքները սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

3. Հանձնաժողովն իրավունք ունի սահմանելու ապրանքների այլ կատեգորիաներ, որոնց նկատմամբ կիրառվում է հատուկ մաքսային ընթացակարգը՝ ներառյալ այս կատեգորիաներին դասվող կամ չդասվող ապրանքները:

Հոդված 254. Հատուկ մաքսային ընթացակարգով ձեւակերպման պայմանները եւ հատուկ մաքսային ընթացակարգի կիրառման կարգը՝ կախված ապրանքների այն կատեգորիաներից, որոնց նկատմամբ այն կիրառվում է

Կախված ապրանքների այն կատեգորիաներից, որոնց նկատմամբ կիրառվում է հատուկ մաքսային ընթացակարգը, Հանձնաժողովի կողմից եւ Հանձնաժողովի կողմից նախատեսված դեպքերում անդամ պետությունների օրենսդրությամբ, սահմանվում են

ապրանքները հատուկ մաքսային ընթացակարգով ձեւակերպելու պայմանները, այդ թվում՝ ոչ սակագնային կարգավորման, տեխնիկական կարգավորման, սանիտարական, անասնաբուժասանիտարական եւ կարանտինային բուսասանիտարական միջոցների կիրառումը, եւ հատուկ մաքսային ընթացակարգի կիրառման կարգը՝ ներառյալ՝

Միության մաքսային տարածք ներմուծվող եւ (կամ) Միության մաքսային տարածքից արտահանվող ապրանքների կարգավիճակի սահմանումը.

ապրանքների օգտագործման ժամկետը եւ այլ պայմաններ՝ հատուկ մաքսային ընթացակարգին համապատասխան.

հատուկ մաքսային ընթացակարգի գործողության ավարտի կարգը.

հատուկ մաքսային ընթացակարգի գործողության կասեցման եւ վերսկսման դեպքերն ու կարգը.

մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության առաջացման եւ դադարեցման հանգամանքները, այն հանգամանքները, որոնց դեպքում մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման, եւ դրանց վճարման ժամկետը՝ հատուկ մաքսային ընթացակարգով ձեւակերպվող (ձեւակերպված) ապրանքների համար.

այն մաքսային ընթացակարգերը, որոնցով կարող են ձեւակերպվել ապրանքները՝ հատուկ մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու եւ կասեցնելու համար, ապրանքներն այդ մաքսային ընթացակարգերով ձեւակերպելիս մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման եւ վճարման առանձնահատկություններն ու դրանց վճարման ժամկետը: